ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/81

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ

Մասնակից՝ «Առէա Պապիրուս» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցում, շշալցված խմելու ջրի ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4081-2020 գրությամբ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 12.03.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-1987 գրության հիման վրա, 17.03.2020թ.-ին «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.03.2020թ.-ին:

17.03.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/81 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել www.gnumner.am կայքում:

25.03.2020թ.-ին, 13.04.2020թ.-ին ու 16.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 13.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.04.2020թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 12.03.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-1987 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում Դատական դեպարտամենտի կարիքների համար դատարկ սկավառակ՝ առանց տուփի (CD) ձեռքբերման նպատակով կազմակերպված՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:»:

3. «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 18.03.2020թ.-ին գրությամբ դիմել է «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4081-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

««ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/81 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

2019թ. դեկտեմբերի 9-ին «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ՍՊԸ) և ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) միջև կնքվել է "Դատարկ (CD) սկավառակների" ձեռքբերման «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի N 1 Հավելվածով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցով նախատեսված մատակարարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 2.1.4 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի, եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք՝ հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Պայմանագրի 2.1.7. կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը /լրիվ կամ մասնակի/, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա. Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ. Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին ուղղված 04.03.2020թ. թիվ Ե-1685 գրությամբ (կցվում է) ՀՀ դատական դեպարտամենտը նշված պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.4-րդ կետի «բ», 2.1.7-րդ կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները:

Այնուհետև, ՀՀ դատական դեպարտամենտը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի պահանջներով, ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ներկայացրել է «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի վերաբերյալ տեղեկատվություն՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետնա՝Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի “ա” ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք, 2019թ. դեկտեմբերի 9-ին «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ի և ՀՀ դատական դեպարտամենտի միջև կնքվել է “Դատարկ (CD) սկավառակների” ձեռքբերման «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պայմանագիր:

Վերը նշված պայմանագիրը ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 04.03.2020թ. թիվ Ե-1685 գրությամբ միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով սույն Պայմանագրի 2.1.4-րդ կետի «բ», 2.1.7-րդ կետի և 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները, ըստ որի՝ Գնորդն իրավունք ունի հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից, եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, միակողմանի լուծել պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքի վրա, այն է.

1. Պայմանագրի 5.1-րդ կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել 1-ին փուլով՝ 10200 հատ, 2-րդ փուլով 30600 /Bingo/ հատ՝ համապատասխանաբար 27.12.2019թ. և 24.12.2019թ. /համապատասխան ապացույցները կցվում է/:

Այս մասով խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա, այն է. համաձայն «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» պայմանագրի տեխնիկական բնութագրի՝ <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն պարտավոր էր ՀՀ դատական դեպարտամենտին մատակարարել <<Բինգո>> ապրանքանիշ, սակայն ՀՀ դատական դեպարտամենտի պահանջով ՍՊԸ-ից պահանջվել է ներկայացնել <<Վերբատիմ>> ապրանքանիշի սկավառակ, մինչդեռ Պայամանագրով սահմանված ժամկետում <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքի ամբողջ խմբաքանակի պատվերը տրվել էր արտադրողին /համապատասխան ապացույցները կցվում է/, որի մեծ մասը արդեն իսկ ներմուծվել էր ՀՀ և խմբաքանակի մեծ մասը արդեն ներկայացրել ՀՀ դատական դեպարտամենիտին, որը չի ընդունվել ՀՀ դատական դեպարտամենտի կողմից՝ և ոչ իրավաչափորեն ՍՊԸ-ից պահանջելով ներկայացնել իրենց համար ցանկալի <<Վերբատիմ>> ապրանքանիշի սկավառակներ, որն էլ պատճառ է հանդիսացել ստեծված իրավիճակի:

Հիմք ընդունելով վերը նված փաստական հանգամանքերը՝ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ն 24.12.2019թ. և 25.12.2019թ. գրություններ է ներկայացրել ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարին, որով մասնավորապես հայտնել է /կցվում են/ հետևյալը.

24.12.2019թ.- Դատական դեպարտամենտի և <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն միջև 2019թ. դեկտեմբերի 9-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» պայմանագրի շրջանակներում <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն մինչև 30.12.2019 պետք է մատակարարեր թվով 35270 հատ դատարկ սկավառակ՝ առանց տուփի (CD): 2019թ. դեկտեմբեր 25-ին հանձնման-ընդունման նպատակով <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն Դատական դեպարտամենտին է հանձնել 30600 հատ դատարկ սկավառակ՝ առանց տուփի (CD):

Հայտնում ենք Ձեզ, որ արտադրողի կողմից ապրանքի մնացած խմբաքանակը ուղարկվել է մեր ընկերությանը և այն գտնվում է ճանապարհին՝ դեպի ՀՀ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 2019թ. դեկտեմբերի 9-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» պայմանագրի 8.6 կետով խնդրում ենք Ձեզ թվով 4670 հատ (մեկ հատի գինը 69 դրամ, 322230 դրամ ընդհանուր գումարով) դատարկ սկավառակ՝ առանց տուփի (CD) մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրով:

25.12.2019թ.- Խնդրում ենք Ձեզ չեղյալ համարել մեր 24.12.2019թ. թիվ № ԱՊ/ԳՐ/2019/12/180 գրությունը՝ կախված տեխնիկական խնդիրների առաջացման պատճառից և հիմք ընդունել սույն գրությունը:

Դատական դեպարտամենտի և <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն միջև 2019թ. դեկտեմբերի 9-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» պայմանագրի շրջանակներում <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ն մինչև 30.12.2019 պետք է մատակարարեր թվով 35270 հատ դատարկ սկավառակ՝ առանց տուփի (CD):

Հայտնում ենք Ձեզ, որ արտադրողի կողմից ապրանքի խմբաքանակը ուղարկվել է մեր ընկերությանը: Փոխադրող ընկերության կողմից տեղափոխման ուշացման պատճառով այն գտնվում է ճանապարհին՝ դեպի ՀՀ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով 2019թ. դեկտեմբերի 9-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» պայմանագրի 8.6 կետով խնդրում ենք Ձեզ մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրով:

Նաև խնդրում ենք պայմանագրի հավելված 1-ում մեր կողմից առաջարկվող դատարկ սկավառակների ապրանքանիշը՝ <<Բինգո>> (հավելյալ պաշտպանվածության ոչ լիարժեք լինելու պատճառով) այն փոխարինել ավելի բարձր հավելյալ պաշտպանվածութուն ունեցող <<Վերբատիմ>> ապրանքանիշով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն ոչ իրավաչափորեն չի ընդունել մատակարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պայմանագրի հավելված 1-ով նախատեսված <<Բինգո>> դատարկ սկավառակների ապրանքանիշը և ոչ իրավաչափորեն ՍՊԸ-ից պահանջել մատակարերելու իրեն համար ընդունելի, սակայն պայմանագրով չնախատեսված <<Վերբատիմ>> ապրանքանիշի դատարկ սկավառակներ՝ Պատվիրատուն առնվազն պետք է բավարարեր ՍՊԸ-ի 25.12.2019թ. գրությամբ ներկայացված խնդրանքը և տրամադրեր ՍՊԸ-ին մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օր, մինչդեռ մինչ օրս՝ այսինքն գրությունից մոտ 3 ամիս անց ՀՀ դատական դեպարտամենտի կողմից առկա չէր որևէ պատասխան:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ապրանքի մատակարարման ժամկետի ուշացումը, ինչը հանդիսացել է տվյալ պայմանագիրը լուծելու հիմքը, տեղի է ունեցել Պատվիրատուի

մեղքով, քանի որ ՀՀ դատական դեպարտամենտը հրաժարվել է ընդունել պայմանագրով նախատեսված և ՍՊԸ-ի կողմից արդեն իսկ մատակարարված <<Բինգո>> ապրանքանիշի սկավառակները և պահանջել է փոխարինել դրանք իր համար ընդունելի <Վերբատիմ>> ապրանքանիշի սկավառակներով: Մինչդեռ նոր պահանջին համապատասխան ապրանքի մատակարարումը ժամանակատար գործընթաց է, և վերոհիշյալ ոչ իրավաչափ պահանջը բավարարելու համար <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ին լրացուցիչ ժամկետ չի տրամադրվել:

Մինչդեռ եթե ՀՀ դատական դեպարտամենտը չպահանջեր <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ից փոխարինել պայմանագրով նախատեսված ապրանքը այլ մակնիշի ապրանքատեսակով, ապա առկա չէր լինի նաև «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պայմանագրով նախատեսված ժամկետի խախտում, և համապատասխանաբար պայմանագրի միակողմանի լուծում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ Կարգի 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն նշվել է, թիվ ՍՅ-ԼՕ-2020/81 ընթացակարգը նախաձեռնվել է 17.03.2020թ.՝ հիմքում դնելով թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պայմանագիրը ՀՀ դատական դեպարտամենտի կողմից 04.03.2020թ. միակողմանի լուծելու մասին գրությունը:

Այսինքն՝ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 04.03.2020թ.–ին, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն 12.03.2020թ., այնինչ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել դեռևս 04.03.2020թ.–ին և Պատվիրատուն Ընկերության տվյալները ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում

ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Հատկանշական է նաև այն փաստը, որ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից վերը նշված փաստի առթիվ արդեն իսկ քննվել է նույնաբովանդակ ընթացակարգեր /ՍՅ-ԼՕ-2019/233 և ՍՅ-ՆԳ-2019/195/: Օրինակ՝ թիվ ՍՅ-ԼՕ-2019/233 ընթացակարգի վերաբերյալ կայացրած որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մասնավորապես արձանագրել է հետևյալը /ներկայացվում է համառոտ/.

«Բողոքներ քննող անձը փաստում է, որ Օրենքի 6–րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 18.11.2019թ.–ին՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի 12.11.2019թ.–ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունը, սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, 26.11.2019թ.–ին՝ հինգ աշխատանքային օրվա խախտմամբ: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի

41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից ...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.11.2019թ.–ի թիվ 26/26-1/19878-2019 գրությամբ «Պոժմաստեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/233 ծածկագրով ընթացակարգը մերժել»:

Արդյունքում ՀՀ դատական դեպարտամենտի կողմից պայմանագրային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման, թույլ տված անգործության և Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթների չպահպանման արդյունքում «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ն հայտնվել է "Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում" ներառվելու վտանգի առջև:»:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

4. <u>ՍՑ-LO-2020/81 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ դատական դեպարտամենտի և «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի միջև 09.12.2019թ.-ին կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պետք է մատակարարեր դատարկ սկավառակ՝ առանց տուփի, CD-R, 700MB, 52x, գործարանային հերթական համարակալմամբ, հավելյալ պաշտպանությամբ: Մատակարարումը պետք է կատարվի ք. Երևան, Վ. Սարգսյան 5 (Դատական դեպարտամենտ) հասցեով, Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 30.12.2019թ.-ը:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

26.12.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Հ. Սարգսյանի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որում նշվել է տեխնիկական բնութագրի մասով առկա անհամապատասխանությունը, մասնավորապես՝ մատակարարված լազերային սկավառակները չունեն հավելյալ պաշտպանվածություն (Extra protection):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզրակացություն և միաժամանակ սահմանվել է 3 օրացուցային օր՝ անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելու համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի պահանջները:

www.gnumner.am համացանցային կայքում 09.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ դատական դեպարտամենտի և «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի միջև 09.12.2019թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պետական գնման պայմանագիրը 04.03.2020թ.-ին միակողմանի լուծելու մասին ծանուցում՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (խախտվել են մատակարարման ժամկետները՝ 15 օրից ավելի):

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4081-2020 գրությամբ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ դատական դեպարտամենտի և «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի միջև 09.12.2019թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Մասնակիցը պետք է մատակարարեր դատարկ սկավառակ՝ առանց տուփի, CD-R, 700MB, 52x, գործարանային հերթական համարակալմամբ, հավելյալ պաշտպանությամբ: Մատակարարումը պետք է կատարվի ք. Երևան, Վ. Սարգսյան 5 (Դատական դեպարտամենտ) հասցեով, Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 30.12.2019թ.-ը:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

26.12.2019թ.-ին Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցիչ Հ. Սարգսյանի կողմից կազմվել է պայմանագրի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացություն, որում նշվել է տեխնիկական բնութագրի մասով առկա անհամապատասխանությունը, մասնավորապես՝ մատակարարված լազերային սկավառակները չունեն հավելյալ պաշտպանվածություն (Extra protection):

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տրվել է բացասական եզրակացություն և միաժամանակ սահմանվել է 3 օրացուցային օր՝ անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելու համար՝ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի պահանջները:

www.gnumner.am համացանցային կայքում 09.03.2020թ.-ին հրապարակվել է ՀՀ դատական դեպարտամենտի և «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի միջև 09.12.2019թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով պետական գնման պայմանագիրը 04.03.2020թ.-ին միակողմանի լուծելու մասին ծանուցում՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի հիմքով (խախտվել են մատակարարման ժամկետները՝ 15 օրից ավելի):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 04.03.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 09.03.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ի կողմից տեխնիկական բնութագրի մասով առկա անհամապատասխանությունը չի վերացվել և Պատվիրատու համար ընդունելի ժամկետում չի մատակարարվել պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին համապատասխանող որակի ապրանքը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած այն հանգամանքին, որ ստեղծված իրավիճակի պատճառ է հանդիսացել ՀՀ դատական դեպարտամենտի կողմից Մասնակցին «Վերբատիմ» ապրանքանիշի սկավառակներ մատակարարելու պահանջ ներկայացնելը,

ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ սույն գործում առկա նյութերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ դատական դեպարտամենտի 25.12.2019թ.-ին ուղղված թիվ ԱՊ/ԳՐ/2019/12/182 գրությամբ Մասնակիցն ինքն է խնդրել ապրանքը փոխարինել «Վերբատիմ» ապրանքանիշով:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ Պայմանագրի 8.8 կետով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝ ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Անդրադառնալով Մասնակցի ներկայացրած այն փաստարկներին, համաձայն որոնց Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 04.03.2020թ.-ին (պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցման թվագրման ամսաթիվը), սակայն Պատվիրատուն մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել է լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարություն 12.03.2020թ.-ին՝ խախտելով Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված հինգ աշխատանքային օրյա ժամկետը, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն

ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Պայմանագրի 8.9 կետի համաձայն՝ վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Վերոհիշյալ իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Կարգի 45-րդ հոդվածով սահմանված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը, սույն դեպքում՝ 6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված հիմքը, ի հայտ կարող է գալ միայն Պատվիրատուի կողմից Պայմանագրի 8.9 կետի և Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթներով սահմանված պահանջի պահպանմամբ: Հակառակ դեպքում Պայմանագիր կնքած անձը (Մասնակիցը) չի կարող համարվել պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված (ծանուցումը ստացված), ըստ այդմ էլ՝ պայմանագիրը չի կարող համարվել լուծված (Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ եկած), հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի դրութները, այն է՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Ուստի, նման պայմաններում, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված ժամկետները, այն է՝ Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակել է տեղեկագրում 09.03.2020թ.-ին, որից հետո՝ 12.03.2020թ.-ին թիվ ԴԴ-3-Ե-1987 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.03.2020թ.-ի թիվ 26/26-1/4081-2020 գրությամբ «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/81 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Առէա Պապիրուս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ